«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор
«HAYANTAR»
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

№ 11-10/262
«05» «03» 2024թ.

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта:info@armforest.am
Հեռ.՝/tel:/тел: 010/65-37-16, 010/65-02-35

ՀՀ ֆինանսների նախարարության
գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող պարոն Ա. Եսայանին
«ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի տնօրեն
Պարոն Ա. Մակարյանին
Հասցե՝ ք. Երևան, Գյուրջյան փ. 58/28,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) 2024 թվականի հուլիսի 26-ի N Ե/1776-24 գրությամբ դիմել է շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ հայտնելով, որ շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ -ի (ՀՎՀՀ 00910116, Ալֆրեդ Վիլայի Մակարյանը «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետերն է) միջև 2024 թվականի մայիսի 13-ին կնքվել է «N ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11» ծածկագրով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենք-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր:

Համաձայն արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության՝ 2023 թվականի նոյեմբերի 29-ից մինչև այսօր Ալֆրեդ Վիլայի Մակարյանը հանդիսացել է «Կանցոպտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00501984, հասցե՝ Հայաստան, Երևան, Էրեբունի 26 բն 15, Էրեբունի 0020, 278.110.1206384, 29.11.2021թ.) 100 տոկոս բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար, որը 2023 թվականի հունիսի 10-ից մինչև 2025 թվականի հունիսի 10-ը, երկու տարի ժամկետով ներառվել է գնումների գործընթացի մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ բացառությամբ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ N
3 «____» _____ 20 թ.

կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձիք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում. . .:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 3-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,(. . .):

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն(. . .):

Համաձայն Կարգի 121-րդ կետի . «մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում»:

Համաձայն Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող (. . .), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Համադրելով փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ արձանագրում ենք, որ ՈՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում Ընկերության հայտով ներկայացված հավաստումն առ այն, որ «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձիք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության 100% մասնաբաժնին տնօրինող Ալֆրեդ Վիլայի Մակարյանը 2023 թվականի նոյեմբերի 29-ից մինչև այսօր Ալֆրեդ Վիլայի Մակարյանը հանդիսացել է «Կանցօպտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00501984, հասցե՝ Հայաստան, Երևան, էրեբունի 26 բն 15, էրեբունի 0020, 278. 110. 1206384 , 29.11.2021թ.) 100 տոկոս բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար:

Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Կանցօպտ» ՍՊԸ ընկերության 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր լինելով, վերջինս

համարվում է փոխկապակցված անձ «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ -ի հետ: Նշված հանգամանքն ինքնաբերաբար հանգեցնում է Ընկերության գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում: Հետևաբար, Ընկերությունը, գնման գործընթացի շրջանակներում ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, խախտել է իր իսկ հայտով ստանձնած պարտավորությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Միաժամանակ հայտում եմ, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայության գրությունը ստանալու օրվա դրությամբ Կազմակերպության և «Բիլդերս» ՍՊԸ -ի միջև 2024 թվականի մայիսի 13-ին կնքված «N ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11» ծածկագրով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենք-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի աշխատանքների կատարումը գտնվում էր ավարտական փուլում, ուստի Կազմակերպությունը «Բիլդերս» ՍՊԸ-ին պայմանագիրը միակողմանի լուծելու պահանջ չի ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են «Բիլդերս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

Հարգանքով՝

Սևակ Մարկոսյան

Գնումների բաժին
Մանե Խաչատրյան
094642033